

նիայի, Հօլանդիայի, Շվեյցարիայի, Սպանիայի, Շվեյցարիայի, Բելգիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ընկերակցութիւնների մասին։ Հեղինակը, առաջին աղբիւրներից օգտուելով, ծանօթացնում է այդ ընկերակցութիւնների գործունէութեան հետ։ Այդ ընկերակցութիւնները կարող են օրինակ դառնալ Ռուսաստանի նմանօրինակ ընկերակցութիւնների համար։

Պ. Տօտոմեանցի բերած թուերը և ճիշտ ֆակտերը ամենայունես մարդուն կարող են համոզել ընկերակցութիւնների բարերար ազգեցութեան մասին՝ հասարակական տեսակէտից։ Շատ ցանկալի է, որ հայ ընթերցողը, որ աւելի հնագիտական —լեզուարանական յօդուածների է սովոր, իր ուշադրութիւնը դարձնի չուրջը կատարուող տնտեսական կեանքի հսկայական հոսանքների վրայ, որոնցից մէկը այնքան հետաքրքիր ձեւով պատկերացրուած է պ. Տօտոմեանցի այս գրքում։ Պէտք է տեսնել թէ արևմուտքի մարդը փոխարէն «լալու ու ողբալու» կամ ճառելու, ինչպէս է կեանքի մէջ իր ագործում ամենասխոր ծրագիրները։ Դէպի մաքուր օդ, ընթերցող, այդ գերեզմանների և մագաղաթների խեղդուկ մթնոլորտից։

Լ. Ա.

26) Գ. ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԵԶԵՍՆ. Գերմանական Օգնութեան Ընկերութիւններ Տաձկա-Հայաստանի համար (հետազոտութիւն). Արտասպուած 1899—1900 թ.թ. „Մուրճ“ ամսագրից. Թիֆլիս, 1901 թ., գինն է 35 կոպէկ։

Հայկական կոտորածներից յետոյ Եւրոպայում կազմակերպուեցան զանազան ընկերութիւններ՝ հայ որբերին օգնելու համար։ Այդպիսի ընկերութիւններ հիմնուեցին 1896 թ. նաև Գերմանիայում, այնտեղի հոգեորականութեան դեկավարութեամբ։ Այդ ընկերութիւնները մերադրուում էին նրա մէջ, որ նրանց գործիչները՝ օգնութիւն հասցնելով թշուառացած հայերին, նպատակ ունեն դաւանափոխ անել, հեռացնել ազգային եկեղեցուց և գերմանացնել իննամուռզներին։ Հեղինակը ծանօթանալով գերման-հայկական ընկերութիւնների գործունէութեան հետ, աշխատում է նախ մի պատկեր տալ այդ ընկերութիւնների գործունէութեան Տաճկաստանում և երկրորդ՝ պարզաբանել գդաւանափոխութեան» հարցը։

Ընթերցողը ստանում է այդ հարցերի մասին բազմակողմանի տեղեկութիւններ, քաղած առաջին աղբիւրներից։ «Հիլֆսօբունդի» դաւանափոխական և քաղաքական նպատակների մասին այնու-

ամենայնիւ դրական պատասխան համարեա չի ստանում ընթերցողը։ Այն եղարակացութիւնը, որին գալիս է հեղինակը մի քիչ առաջ, յետոյ՝ վերջաբանում մի քիչ փոխում է, որովհետեւ հետազոտողը տատանուում է երաշխատորել, որ ապագայում չեն խախտուիլ այն մարդասիրական, անշահ սկզբունքները, որոնցով մտադրութիւն ունէր զեկավարուել Հիլֆսրունդը իր գործունէութեան սկզբում։ Անշուշտ մարդասիրութիւնը, միսիօնարական նախանձախնդրութիւնը և քաղաքական նպատակները այնքան խճառուած են Հիլֆսրունդի գործիչների մէջ, որ գժուար էլ է միմիայն դրական, իդէալական կողմեր սպասել։ Սակայն անկասկած է, որ այնու ամենայնիւ Տաճկաստանի բռնութեան թշուառ զոհերը մնծ օգնութիւն են ստանում գերմանական հայասէրներից։ Հետազօտութեան մէջ գովելի զգուշութեամբ և շրջահայեցողութեամբ արած եղարակացութիւնները ցոյց են տալիս թէ յամենայն դէպս հարցը շատ աւելի բարդ է, քան թւում է առաջին անգամից։ Ցանկալի է, որ հեղինակը շարունակի հետեւել Հիլֆսրունդի գործունէութեան եւ բաժանի հայ ընթերցողների հետ այն նոր տեղեկութիւնները, որ նա ձեռք կը բերի իր հետազօտած հարցի մասին։

I. Ա.

Զ7) Ա. ՇԱՑՈՒՐԵՍՆ. Գրչի հանաբեներ. Մոսկով, 1901 թ. 88 երես, Գինն է 50 կ.։

«Են հանաբին ինչ ասեմ, որ կէսը զորթ չը լինի», ժողովրդի այս խօսքերը հեղինակը բերում է իրը նշանաբան իր գրքոյկի։ Եւ խկապէս, պ. Ծատուրեանը հանաբի ձեռվ դառն ձշմարտութիւններ է ասում ընթերցողին։ Անշուշտ նոր մտքեր և նոր խօսքեր չը կան թէ այդ «հանաբների» և թէ առակների մէջ, այլ նորութիւնը գողարիկ, գեղարուեստական ձեսկերպութեան մէջ է։ Այն, ինչ մտրակել են մեր հրապարակախօսները իրանց յօդուածներում, այժմ բանաստեղծը մի քանի կիսդանի գծերով պատկերացնում է իր ոտանաւորներով։ Այդ հանաբներից մէկը, «Ժողովը», արդէն տպուած էր մեր ամսագրի յունուարի համարում։ Առաջ բերենք մի երկու «հանաբներ» էլ, գրգռելու համար ընթերցողի ախորժակը այդ նոր ձեի մտրակումներով։